

Հ.ԿՈՄՈՒԽԵ

ՀԱՅՐԵՆԻՔ

891.99  
9-68

19 NOV 2

Արքայի գումարներ

831.99

9-68

այ.

# ՀԱՅՐԵՆԻՔ

(բանասեղծություններ)

3816

12

ՊԵՏՐՈՍ

1 9 3 9

ՑԵՐԵՎԱՆ

23.05.2013

36407

## ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Ի՞նչ տամ հիմա յես նրան հարազատ ու անգին,  
Յես ի՞նչ ունեմ պահած հայրենիքիս համար,  
Յես ի՞նչ ջրով ջրեմ իմ խնամած այգին,  
Վոր ծաղիկներն ընդմիշտ թարմ ու պայծառ մնան:

Ունեմ վսեմ խոհերի չնաշխարհիկ պարտեզ,  
Յեվ խոհերով կախուն պտղատու ծառեր,  
Յես կրանք մտա, աշխարհում սիրեցի վարդեր  
Հայրենիքս յերգելու քնար եմ առել:

Ունեմ ովկիան հույզերի, անսպառ ոիրո,  
Ունեմ կամքի անխորտակ, անառիկ մի սար,  
Կորով ունեմ, խնդութիւն ունեմ սարերով,  
Կտամ ամենը, կտամ հայրենիքիս համար:

Ճ Ճ

3186

39

Г. Комүни  
РОДИНА

Գիշ Արմ. ՀՀ, Երևան, 1939 թ.



Կտամ նրան ծաղկավառ յերգիս կեռասենին,  
Հոգուս սրինգը կտամ, մատներս ճկուն,  
Վոր նա ծաղկի ու յերգեն բլբուլներս վերից,  
Վոր միշտ արև շողա մեր այս պայծառ այգում:

Առ, իմ անուշ հայրենիք, առ իմ յերգերը բորբ,  
Առ իմ բազուկների ուժը ձույլ աննկուն  
Զգացումս առ, լիրիկան իմ հորդ,  
Կյանքս պատրաստ յերթիդ՝ հաղթական ու կուռ:

## ԼԵՆԱԿԵՏԸԸ

Տվեք բնձ հենման կետ  
Յեկ յես յերկերը կշարժեմ:

Արիմես

1.

Ցես հիշում եմ այսոր այն գիտնական մարդու<sup>1</sup>  
իմաստության խոսքերն հողագնդի մասին,  
Վոր ամլության զարից հենակետ եր ինդրում  
Յեկ ուզում եր իր նոր խոսքի իմաստն ասի:

Սակայն իր խոսքերի միտքը լուսավորող  
Կայծերն, — իրեն փառղ վոսկորները տվին.  
Յեկ նա, այդ գիտնական միամիտը մի որ  
Մեռավ, հավատացած, վոր հենակետ չունի:

Ահա յես քեզ կասեմ, հեռու իմ բարեկամ,  
Վոր քեզանից հետո հենակետի համար  
Դասակարգերն յելան, զարնվեցին իրար,  
Հողագունզը ներկին իրենց արնով անդամ:

Յեվ այդ կոիմսերում բազմահազար մարդիկ  
իբրև նոր իմաստուն Գալիլեյ ու Զօրդան,  
իբրև այս մեծ դարի գիտնական ու մարտիկ  
իրենց յերկրի շարժման հենակետը գտան:

2.

Ահա յերկրիս գետերն իրենց ձերմակ բաջով  
Ու քարքարոտ, դժվար հատակներով անհարթ,  
Մոնչոցով հզոր, ահազնաթափ ուժով  
Գլորվում են, զարնում առւրբիններին պողպատ:

Ու գեներատոր ուղեղն իմաստությամբ շարժման  
Ընդունում ե պողպատ իր ուսերի վրա  
Ալիք-ալիք թափվող հարվածները գաժան,  
Վոր արևի փոխի փրփրող ուժը նրա:

Յեվ գիտնականի գեմքով մեխանիկի գիմաց,  
Վոր այս շարժմանն հղեց իմաստալի կորով,  
Պար են գալիս տակտով վոլոտնետրերը կամաց  
Վառված կլանքի շարժման ստեղծումի հրով:

Ու թափվում են փրփրուն ջրեր կոհակ-կոհակ,  
Պտտվում են հզոր գեներատոր, ուղեղ  
իբրև շարժման ամուր հենակետ կամ սոնակ,  
Ստեղծագործ մարդիկ հորդում են լույս, հեղեղ:

Այս հատիկը ցորենի  
Ճայթեց հողի խորերից.  
Ու գալնան ծիլն աներեր  
Զգտեց, ձգտեց դեսլի վեր:

Նա արմատները թաղեց  
Թուխ-թուխ պարարտ հողի մեջ  
Յեվ արեի ժիր մեղուն  
Լցրեց հասկերը բեզուն...

Յեվ հողագունդը մեր մեծ  
Դարի բերնով ծիծաղեց,  
«Հոդի մարդը իմաստուն  
Հենման կետ ելլատեղծում...»:

Յեվ դու, հեռավոր ու միամիտ իմ Փիզիկ,  
Վոր վառվեցիր չեղած հենակետի համար,  
Դիտե՛մ արդյոք, վոր մեր այս մեծ դարում  
Յեվ այսորվա անզուլ կոիմսերում համառ  
Հողագունդը շարժող հենակետը առանք:

1934 թ.  
Լենինական

## ՆԱԽԱՏԻՆՔ

Արեւ փոեց փեշերն ու նստավ  
Ինչպես հարսնացուն՝ ծաղիկների մեջ,  
Ինչպես վոսկեդույն առագաստանավ,  
Զինջ արևմուտքի ջըերը շրջեց:

Ու յես ցանկացա խնդությամբ անբիծ  
Գրել գարնալին արևոտ մի յերգ,  
Բայց իմ սվինս լուռ նախատեց ինձ,  
Վոր սուր ցցված եր մահճակալիս զեմ:

«Յերեք գնդակով կարմիր շիկացած  
Չկարողացար խփել նշանիդ...  
Ամոթ քեզ, մարտիկ, ամոթով պատած  
Եերգնվ ես քշում ամոթիդ քամին»:

Յեվ յես գցեցի՝ ձնշված ու ծանր,  
Պարտված գրիչս գցեցի գետին.  
Ու գլուխս կախ մնացի համը,  
Մինչև խփեցի նշանակետին:

Մինչև գնդակս կարմելով կոր գիծ  
Խփեց խնձորին թափով հղորի—  
Ու արշավեցին հանգերը յերգիս  
Վեհ շառաչյունով հեծելազորի:

## ՍՐԻՆԳԸ

Յերբ այս գյուղի վրա լուսածեգի կապույտ  
Քաղցրությունն ե փովում մաքուր ցողի նման,  
Մեր հովիվ մի սրինգն իր շուրթերին հպում  
Ու թափում ե յերգի անձրև գյուղի վրա:

Նա մի սրինգ ունի քաղցրաբառ ու խոսուն  
Ու սրտաբուղիս յերգի անասելի շնորհք.  
(Արդյոք իր իմաստուն ծերությունն եր հոսում  
Այդ սրնգի անուշ գեղգեղանքով գերող)...

Նվագում ե հովիվս ու սրնգի ձայնից  
Դողդողում են փոված կանաչները թավիշ  
Յեվ կենսավառ յերգի թրթիռներն անբիծ  
Փովում են այս գյուղի արտերին ու սարին:

Շաղ ե տալիս առաստ սրնգահար հովիվս  
Աշխատանքի կանչող նվազներն իր անուշ. —  
— Զարթեք, իմ ընկերներ, շնչեք բույրը հողի,  
Թող ձեր դեմքը շոյի հովի թեր քնքուշ:

Ներս ե լցնում դյութիչ թրթիռները յիրգի  
Գյուղի արեգնախանձ կտուրներից կորձե,  
Յեվ թափվում են նրանք սերմնացանի դեմքին,  
Վորպես մի զովարար ու խնդության անձրեւ:

Յեվ զարթնում ե գյուղի ուժը համալնական  
Մարդկային թարմ կյանքի գարնանալին փալլով.  
Դեպի հողը բերրի, դեպի գործը արդար  
Չտեսնված մի յերթ ընթանում ե քալլով...

Ու ձուլվում են յերթին կանալք, տղամարդիկ,  
Վաթսունամյա ծերեր — պատանու պես աշխուժ  
Ու յեփվում ե նրանց յերթը գարնան խանդից  
Ու հնչում ե մի յերգ ծնված հողից այն սուրբ:

«—Եռյալ բացվեց, ջան, արեգակ,  
Յելեք գնանք արտերը ծով,  
Յելեք գնանք ցանենք ու գանք,  
Ցանենք՝ արտեր լցնենք հացով,

Ցանենք արտեր... Արել վառ  
Թող լցնի ձուլլ հասկ ու հատիկ.  
Ջան, արեգակ, մեր հասկը առ  
Թուխ հողի տակ, սրտիդ մոտիկ:

Թող թափվի ցած անձրեւ հորդ  
Ու թող ճեղքվի հողը փխրուն,  
Թող կանաչեն արտ ու արոտ...  
Ջան արեգակ, ջան մեր գարուն...»:

Յեվ յերգում են նրանք սրնգի հետ անուշ  
Սրաի անեղբական մի խնդությամբ անմար.  
(Ո՛, սրտերը նրանց վորքան սերմ են պահում  
Ստեղծագործ կամքի բեղմնավորման համար):

Նվազում ե հովիմը ու կատարից ժայռի  
Գլուխում ե առվակն իր յերգառատ կյանքի.  
Նա պատմում ե հովին, կանաչներին, առվին  
Յերջանկության մասին սրնգով իր անգին:

## ՅԵԹԵ ԱՍԵՆ...

Յեթե ասեն, թե աշխարհում  
կա արեից պայծառ արև  
Յեվ ալդ արեն և հուրհուրում  
Նորածնի գլխի վերե, —  
Կասեմ՝ գիտեմ. իմ հալրենի  
Յերկինքն և այդ լույսը թափում.  
Լցնում սրտերը մայրերի,  
Լցնում նրանց կրծքի կաթում.

Յեթե ասեն, թե մալրը քո  
Կաթ և տալիս իր զավակին,  
Վոր մարդկային սուրբ որենքով  
Վորդին ել կյանքն իր մայրիկին, —  
Կասեմ՝ գիտեմ. Որենքն ալդ սուրբ  
Գրված և իմ հայրենիքի  
Ստալինյան որենսդրքում,  
Վորպես պատգամ նրա կամքի:

Յեթե ասեն, թե կյանքը քո  
Ինչով և թանգ, ինչով անգին.  
Յեվ լնչն ե, վոր հայրենիքում  
Գգվում և քեզ գորովագին, —  
Կասեմ՝ նրա սերն և վառվում  
Իմ կրծքի տակ, իմ ճակատին.  
Իմ սրտի մեջ և բոց առնում  
Սյդ անշեղ հուրը թանգագին:

## ՅԵՐԱՆԿՈՒԹՅԱՆ ՈՐԵՆՔԸ

(ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ)

Ուրախալի և հաճելի յե դիտենար փոք մեք  
մարդկանց առատորեն թափած արյունը չան-  
ցավ իզուր, զոք նա տվեց իր արդյունքները:

ՍՏԱԼԻՆ

Խնդության ջերմ հույզերի ջրվեժը ցած և հոսում  
վերածնված մարդկության սրտերում թափ մի առած.  
Ու ցնծության բարբառով ժողովուրդն և մեր խոսում  
Յերջանկության մասին իր՝ որենքով իր սահմանած:

Այս որենքի ամեն բառն, ամեն իմաստը խորին  
Ստալինյան հանձարի հստակությամբ իր պայծառ  
Պատմում և մեզ դարավոր պալքարը վեհ ու արի  
Յեվ հաղթության ու կյանքի հերոսական մարտը վառ:

Ո՞ւր եք, անգին զավակներ, ընկած նրա ճամբեքում,  
Վեր բարձրացեք, կարդացեք որինքը ձեր լերազած.  
Զոհ տվեցիք կյանքը ձեր մեր թշնամուն արնախում  
Յեվ հայրենիքն ստացավ գոյության փառքն իր ազատ:

Ճեր արյունով և զրված այս որենքը սրբազն  
Թափած լերկրիս լեռներում, անտառներում շառաչուն.

Ներկված և ձեր արյունով զրոշը մեր պետության  
Քոված կանաչ ծառերին, խառնված ջրին կարկաչուն:

Յեվ հայրենի լեռներից վաղող ջրերը ալսոր  
Եշնջում են ցնծությամբ սրբազն բառն որենքի՝  
Անտառներն ու ջրերը, հողի ընդերքը հզոր  
Պատկանում ե մեր ազատ հայրենիքի զավակին:

Նրա փառքին են ծառա յերկաթուղի, գործարան,  
Վորոնք լցրին ցնծությամբ հայրենի դաշտ ու ձորեր,  
Նրա փառքն են զարդարում ազգիները մրգառատ,  
Յեվ հասկերը ցորենի՝ զարդարելով գերը մեր:

396 395  
3  
Ու այս գերբը պատմում է պատմությունը նոր մարդու,  
Վորի կյանքը յերջանիկ գտնվում է իր ձեռին,  
Վորը յելավ վճռաբար կովի ցամամբ իր հորդուն,  
Տրորելով վոտքի տակ յերկալանի արծիվին:

Տրորեց նա վոտքի տակ մառվերը արնակող՝  
Դաշնակցական բանության խորհրդանիշը զազիր,  
Յեվ հզիւցած տերերի ավելցուկները լափող  
Մինիստը ու խմբապետ, վորպես գամփո ու թազի:

Սակայն յերկը սահմանից դուրս ժանիքներ են սրում  
Ֆաշիստական գամփոներ, վոր պահակին մեր կծեն.  
—Հիշեր, վորդի հարազատ, քոհալրենի պարտքը սուրբ,  
Վոր թշնամու վոտքը պիղծ չմոռենա մեր գծին:

1937 թ. մարտ.  
Մոսկվա



## ՔԱՅԼԵՐԴ ՍԱՀՄԱՆԱՊԱՀՆԵՐԻ

Հնչեք, փողեր, հայրենիքի մեր անդին,  
Թող յերգն հոսե արևելքից արևմուտք.  
Դողանջները մեր հաղթական քայլերգի  
Թող թրատեն գիշերային քողը մութ:

Հայրենիքի Առաջնորդի պես հզոր  
Արծվի աչքով հսկենք սահմանն հայրենի,  
Հայրենիքի դաշտաններ ձեզ նզովք,  
Մենք անսասան կանգնած ենք մեր սահմանին:  
Հնչեք, փողեր...

Սահմանապահ հերոսներ ենք մենք խիղախ.  
Պահապանում ենք հայրենիքի փառքը մեր.  
Հայրենիքի սիրով մեր սիրտը կիզած  
Կովի կելնենք, վոնց Լագոդա յեղբայրներ:  
Հնչեք, փողեր...

Թող միշտ հնչեն մեր յերգերը սահմանին  
Ու յերգի հետ Առաջնորդը մեր ժպտա.  
Վայ թշնամուն, թե կփորձի այս ժամին  
Մեր սուրբ հողին իրեն արնոտ ձեռքը տա:  
Հնչեք, փողեր...

## ՅԵՐԳ ԼՃԻ ՎՐԱ

Լճում լողում եր կայտառ մի մակույկ,  
Զուրը ճողփում եր նրա յեղերքին,  
Զահել աղջիկ մի աշխուժ թիարկում  
Ու լայն փոռում եր թևերն իր յերգի.—

«—Մեր բերքը առատ ե, մեր կյանքը ուրախ,  
Մեր ուժը միշտ հաղթ և թշնամու վրա...  
Բացվեց առավոտը, ժպտաց արտերին.  
Ժպտաց նա կյանքին մեր ու մեր լեռներին.  
Սահիր, մակույկ իմ, սահիր դեպի ափ—  
Յարս կանչում ե կարոտով անափ...»

Ափին նստած եր մի վառ պատանի  
Ու լուռ լսում եր յերգող աղջկան.  
Հանկարծ նրա սիրտն հուզվեց այդ յերգից  
Յեկ նա ել յերգեց յերգ մի հուզական.—

«—Հայրենիքը մեր ծաղկած այդի յե,  
Նրա մեջ հասնում են սիրուն աղջիկներ.  
Փոքր թևերդ, լողմ, քույրիկ իմ,  
Լողա մինչև ափ, շուտով կհասնես...»

Ափին կանգնած ե քո սիրած յարը,  
Սաստիկ հուզել ե քո յերզը նրան,  
Քո յերզը, վոր այնքան պարզ ու վարար ե.—  
«—Մեր ուժը միշտ հաղթ ե թշնամու վրա...»

Կրկին հնչում ե ու փովում լճին  
Յերզը աղջկա խրոխտ ու վճիտ.—

«—Աշունը փակել ե լայն իր դռները,  
Կրկին գարունը շուտով կրացվի.  
Գնա, պահպանիր տրակտորներդ  
Վոր աճեն սիրով արտերը հացի:  
Գնա, հեռացիր ափից, անուշ իմ,  
Գնա, հեռացիր, շուտով կդառնամ.  
Յերբ իրիկունը փոխ քնքուշ իր  
Թուխ-թուխ ծամերը լճին այս վառման...»

Յեվ կրկին սահեց փոքրիկ մակույկը,  
Չուրը համբուրեց կողերը նրա,  
Կրկին փոխ նա յերզը առույգ իր.—  
«—Մեր ուժը միշտ հաղթ ե թշնամու վրա...»

## ՊԱՏԳԱՍԼ

Այժմ գրված սեղանիս սպասում ե ինձ մի զիրք,  
Վոր հետ գառնամ գործից առւն ու կրկին ձեռքս առնեմ.  
Ուր գրված ե՝ պահպանումն հայրենիքի մեր անգին  
Մեր կյանքի պես թանգ ե միշտ ու սրբազան պարտքը  
մեր:

Յերբ թերթում եմ յես հաճախ ու կարդում եմ այդ  
գրքի

Վոսկե բառերն իմաստուն, այնքան հուզիչ ու հատու  
Յեվ արեն իմ հայրենի ժամում ե պարզ լերկնքից,  
Ստալինյան չերմութիւնը վերից խօներ ե թափում,—  
Այդ խոների թանգազին բերքը կողով առ կողով՝  
Հայրենիքիս տներից, պալատներից մարմարե,  
Մեր գյուղերից ցնծության, քաղաքներից աղմկող  
Հավաքվում ե ու հոսում զեպի մարզը հանճարեղ,  
Դեպի մարզը, վորի ձեռքն այդ պայծառ գիրքը գրեց  
Ու ցանեց սերմը սիրո մեր նրտերում արգավանդ՝  
Դեպի յերկիրն հալրենի, դեպի ուժը նրա մեծ,  
Դեպ սահմանները նրա անմատչելի ու անպարտ:

Այդ պատգամը նա գրեց հերոսների կրծքի տակ,  
Վոր բողբոքի անդադար խիզախության կայծը վառ,  
Նրանց մղի անվարան դեպի ծովերն անհատակ,  
Վոր ծովերից դուրս բերեն դյուցազնական փալլ ու

Ձեզ անցնում են հերոսներն ովկիանոսները սառած,  
Իրենց անունը պայծառ յերկրի կրծքին գրելով,  
Առաջնորդի թանգագին պատգամն ու սերը առած՝  
Հողագնդի հեռավոր յերկրներում ցըելու.

Նրանք կանգնած են արթուն հայրենիքի սահմանին,  
Վոր մեր հողը չմտնի թշնամին նննդ ու խարդախ.  
Փշուր-փշուր կղառնա նրանց դիպչող թշնամին,  
Ինչպես սառույցը դիպչող ամուր ժայռին անխօրտակ:

Նրանք լողում են՝ նստած սառույցներին դրեյֆող,  
Հայացքները իմաստուն՝ բնեոի ցուրտ հողմերին,  
Վոր ուղիները նշեն հերոսների սլացող,  
Վորոնք կդան հարադատ Մոսկվայի կողմերից:

Նրանք մեր մեծ յերկրի արևելքից արևմուտք  
Յերգում են հիմնը անմահ խիզախության ու փառքի,  
Կռապված սրտի թելերով Առաջնորդի հետ ամուր,  
Վոր փառքը միշտ մնա վառ ու լույսը տա աշխարքին:

## ՀԱՆԴԻՊՈՒՄ

Պուշկինի մահվան եա-  
բյուրամյակի առթիվ:

Այս վեհ լեռները,  
Այս լերկ ժայռերը,  
Այս առուները  
Տեսել են նրան.  
Քամին սանրել ե  
Սև գանգուրները  
Ու փռկել պայծառ  
Ճակատի վրա:

Անցել ե գետը,  
Մեր գիծ Դեվ-Բեդը,  
Ու խճել ե պաղ  
Զուրը լեռների.  
Ո՛, այս ջրերը,  
Այս առվակները  
Հպվել են պապակ  
Նբա շուրթերին.

Յեկ ընթացել ե...  
Սայլուզիները  
Նրան հանել են  
Կատարը սարի.  
Յեկ հանկարի... Դեմը  
Սայլ մի բերել ե  
Այն գրողի դին  
Ծանոթ, մտերիմ,  
Ճնշել ե վիշտ մի  
Հանձարեղ սիրոն իր  
Ու ցող ե պատել  
Քնարին նրա.  
Տխուր, գլխիկոը  
Մոսեցել սայլին,  
Թեքվել՝ սիրելու  
Դիմակի վրա.

Հոգին լցվել ե  
Դառնությամբ անհուն  
Անարդել ե լիրը  
Արարքը ցարի.  
Ու շշնջացել —  
Անկարելի յե  
Այս մութ աշխարհում  
Փրկվել մահից:

Հետո անցել ե  
Սրտում մի հուզում.  
Ծանը բեռի տակ  
Բազում խոհերի.

Դեպի Արփաչայ,  
Դեպի Արդրում  
Դեպ արեգակը  
Բարկ, հարավալին...

Հետո անցավ նա  
Հին այն աշխարհից  
(Սրտում թաղած վիշտ  
Մի մտերմական).  
Ինչպես գետակն այս,  
Վոր հոսում ե միշտ  
Իր բյուր յերգերով  
Զինջ, հավերժական:

## ՍՈՒՐԻԿԻ ՆԱՄԱԿԸ ՈԴԱՉՈՒ ԶԿԱԼՈՎԻՆ

(ՄԱՆԿԱԿԱՆ)

Սուրիկին մի հարց եր տանջում,  
Թե վոնց դառնա նա ողաչու:

Կտրատում եր թուղթ ու կարտոն,  
Փայտ եր տաշում, հղկում, հարդում,  
Շինում մոտոր, պլոպելլեր  
Ու թացնում քամու հետ վեր:

Սակայն ինքը մնում եր ցած,  
Թուխս աչքերը յերկինք հառած.  
Կարոտանքով նրան նայում,  
Թե քամին այն ուր ե տանում:

Վերջը տեսավ, վոր չի լինի  
Թոչել յերկինք առանց թեփ՝  
Վոր պետք են մեծ, պողպատ թևեր  
Յեզ իսկական պլոպելլեր:

Մի թուղթ գրեց իր առաջին,  
Գրեց նամակ յերկրի քաջին.—

« Դու, սիրելի իմ հորյեղբայր,  
Վհնց ես թռչում այդքան յերկար.  
Յես շինեցի մի ողանավ,  
Բայց անիրավ քամին տարավ  
Յեզ չթողեց, վոր մի հանգով  
Յերեանից թռչեցի Մոսկով...

Թոչեյի, տեսնեյի մեծ լենինին,  
Ու սիրելի Ստալինին  
Յեզ իմ շինած ողանավով  
Թոչեյի քո ճանապարհով...».

Ու քարտեղի վրա մի մեծ  
Եր թռիչքի ճամբան գծեց  
Յեզ ուղարկեց խորհրդային  
Յերկրի հերոս ողաչուին:

1936 թ.  
Մոսկվա

## ՀԱՐՑԱՍԵՐ ՏՂԱՆ

(ՍԱՇԿԱԿԱՆ)

— Մայրիկ, ասա, մյ մայրիկ,  
Ի՞նչ ասել ե հայրենիք.—  
Հարցնում ե անհանգիստ  
Փռքրիկ տղան մայրիկին:  
— Հայրենիքը, իմ բալա,  
Դա մեր հողն է այնքան լավ,—  
Այս լերկիրը, ուր ահա  
Դուք եք ծնվել մեզ համար,  
Ուր աճում եք, մեծանում,  
Արևն ե ձեզ գուրդուրում,  
Ուր ամենքը ձեզ սիրում  
Ու գրկում են, համբուրում.  
Մեր լեռները այնքան վեհ,  
Վոր ցցվել են դեպի վեր,  
Այնքան խորունկ մեր ձորեր,  
Այնքան գետեր ու ջրեր,  
Այնքան զաշտեր ու արտեր,  
Վառ ծաղիկներ ու վարդեր,  
Այգիները պլողաբեր,  
Այնքան խաղող ու օրգեր,  
Լավ նկարներ ու գրքեր:

Այնքան գյուղեր, քաղաքներ,  
Գործարաններ ու հանքեր,  
Արագընթաց գնացքներ.—  
Այս ամենը, այսքան լավ  
Քո հայրենիքն ե, բալա:

— Հապա Մոսկվան կարմիր  
Ում հայրենիքն ե, մայրիկ:  
— Մոսկվան հլ, իմ լորիկ,  
Հայրենիքն ե բոլորի.  
Հալրենիքն ե բանվորի,  
Հալրենիքն ե զինվորի,  
Հալրենիքն ե գյուղացու,  
Ռուսի, հայի, վրացու,  
Այնտեղ քնած ե հանգիստ  
Լենին պատը թանգաղին.  
Այնտեղ ապրում ե հիմի  
Ստալինը սիրելի,  
Վորն հայրական իր սիրով  
Այնքան շատ ե ձեզ սիրում.  
Յեթե զու լավ սովորես  
Մոսկվա կտանեն քեզ,  
Վոր լավ տեսնես զու նրան  
Ու գիրկն առնի քեզ ուրախ:

— Ո՞վ ե ուզում, այ մայրիկ,  
 Խլել մեղնից հայրենիք.  
 — Հայրենիքին, իմ ջանիկ,  
 Կա արնախում թշնամի.  
 Թշնամին այդ չար ե խիստ,  
 Նրան կոչում են ֆաշիստ.  
 Նա ուզում ե զրկել մեզ  
 Մեր ևս կյանքից ժամերես,  
 Վոր ես արել մեր ջերմ  
 Չբարձրանա սարից վեր,  
 Վոր խաղողը մեր հասած  
 Ել չկախվի թփից ցած.  
 Սակայն մենք շատ ենք սիրում  
 Հայրենիքը մեր սիրուն  
 Յեվ կպատժենք նրան խիստ  
 Լինի գաշնակ թե ֆաշիստ.  
 Յեվ բանակով մեր կարմիր  
 Կցրենք չար թշնամուն:  
 Իսկ դու յերբ շուտ մեծանաս,  
 Քաջ ոդաչու կդառնաս  
 Ու կթռչես միշտ արթուն  
 Քո հայրենի յերկնքում:  
  
 — Մայրիկ, անուշ իմ մայրիկ  
 Սիրում եմ իմ հայրենիքը, —  
 Ասաց տղան սրտագին  
 Ու դիրկն ընկապ մայրիկի.

## ԱՌԱՎՈՏ

Յոզը պատեց վաղորդյան կանաչին ու արտին,  
 Ո՛, ցորենի իմաստուն որորվող ցողուն,  
 Դու շը թռավ և ահա, կարծես իմ սրտից,  
 Իմ սիրո սերմը կտցեց ու զցեց հողում:  
 Կծի նա վաղորդյան ցող ու շաղի մեջ,  
 Յեվ կծաղկի արեի ջերմության ներքո.  
 Մենք կզրկենք իրարու զգվանքով անշեջ,  
 Ու կորորվեն ցողուններ՝ ցորենի բերքով:  
 Նոր կրակով կսիրենք յերկիրն հայրենի  
 Իրար խառնած մեր սերն ու բերքը ցորենի:

Մայիս 1936  
Մոսկվա

## ՅԵՐԳ ՄԻ ԶԻՆԱԿՈՉԻԿԻ ՄԱՍԻՆ

Նա յերջանիկ եր, վոր ապրում եր, կար.  
Նա յերջանիկ եր, վոր մտավ աշխարհ...  
Նա մտավ աշխարհ, յերբ վողջ աշխարհի  
Քլիսին կախվել եր արնոտ մի չարիք...  
Նա յերջանիկ եր, վոր ապրում եր, կար.  
Նա յերջանիկ եր իր բախտի համար:

Կար մի ժամանակ, յերբ աշխարհավեր  
Կոփմերը սև, մահվան տիպարով  
Շրջում եյին դաշտերն, ավերում գյուղեր,  
Հըրհոռում եյին, ծրծաղում, պարում...  
Իսկ նա փոքրիկ եր, փոքրիկ յերեխա՝  
Մեռն աչքերով՝ յերեք տարեկան:

Իսկ մահն ազան, մահն արնախում  
Ցելել եր վորսի բորենու նման,  
Ճանկում եր պատերը, գոները բաղիսում,  
Հոտոտում, լիզում դուռն ու պատոհան...  
Ու մեռնում եյին մարդիկ ամենուր,  
Դաշտն ել արնահամ բերքով եր լցվում.

Այդ որերին եր, վոր հայրը նրա  
Կտրեց իր ձեռքի մատները յերեք,  
Արտասուք թափեց իր արյան վրա  
Ու սիրտը լցվեց դառնության հեղեղ.  
Վոր հեռու մնա կովի ճակատից,  
Վոր սրտից, սրտից արյուն չկաթի.

Այդ որերին եր.—նրանք ել մեռան՝  
Իրեն հետ ծնված անթիվ մանուկներ,  
Վորոնց ջինջ հոգու աչքերի վրա  
Նստել եր մահը մոայլ ու անսեր...  
Բայց ուրախ եր նա, վոր փրկվել եր, կար,  
Վոր չեր ժպտացել իրեն մահը չար:

Յեկ նա մեծացավ, հասակով իր սեգ  
Կանգնեց իր յերկրին տեր ու անարար...  
Յեկ բախտավոր եր, վոր ապրում եր, կար  
Ու մաքառում եր նոր կյանքի համար:

Նա վայելում եր և զգում անհուն  
Այն խնդությունը, վոր հոսում եր ջինջ,  
Բայց յերբ կանչեցին նրան մի աշուն  
Իրեն հասակի նոր զորակոչին,—

Զկար իր հոգու ցնծության չափ,  
Թվաց՝ բորբ արևն ուսերին իշավ:

Յեզ նա հպարտ եր, վոր ապրում եր, կաք,  
Կյանքի ճամբեքում չեր կորել անհետ.  
Կանչում եր յերկիրն ու հերոսաբար  
Նա հանուն նրա կվերցներ ղենք...  
Ու սրանից դատ ուղեղում նրա  
Զկար գաղափար վեհ և հուրնուրան:

«—Ա՛, յերջանկաբեր խնդության անիվ,  
Դարձիր, պտտվիր իմ բախտի նման.  
Յես բախտավոր եմ, առողջ, պիտանի—  
Կդառնամ զինվոր իմ յերկրի համար...  
Ու կովի դաշտում Մաքսիմ գնդացիր  
Եվերցնեմ, —յեթե կոիվ գնացի...»:

Ու վողողվել եր հոգին խնդությամբ,  
Մոռացել եր հորն ու ձեռքը նրա,  
Յերբ զինկոմն ասաց, —հորդ հաշմանդամ  
Խնամում ես դու, բանակ չես դնա...  
Յեզ նա մի վայրկան սաստիկ ցավ զգաց,  
Կարծեց իր ձեռքն ել կտրվեց, ընկավ:

«— Ինչպես չեք տանի, չե... ընկեր դինկոմ,  
Նա զիտե, զիտե, զիտե աշխատել  
Նա զեռ արի յե... թեկուզ նա զենքով...  
Կարող ե քանդել լեռներ ու շախտեր...  
Տարեք ինձ, տարեք, տարեք ինձ բանակ,  
Տարեք, —ձեռք բերեմ փառք ու հաղթանակ»:

Սակայն նա տիսուր, տիսուր դարձավ տուն,  
Նայեց տիսութիւնը հոր ձեռքի վրա.  
Այստեղ զառն ու խոր անցյալն եր կարդում.  
Յեզ նա դառնությամբ անիծեց նրան...  
Անիծեց նրան, վոր կրկին անգամ  
Փորձել եր ծաղրել իր լավ ապագան:

Ու նա ծանրախոհ մտածում եր լուս,  
Թե ինչ եր բերել արհավիրքը սե,  
Վոր սախակել եր ձեռքը կտրելու  
Իր հոր, վոր այնքան հոգսեր եր ուսել...  
Հոգսեր եր ուսել այն՝ ձորտը, վորպես,  
Վոր մտրակվել եր հնազանդ ու հեզ:

Մարակվել եր լուս ու խոր դառնությամբ  
Թույնն ատելության թափել իր ձեռքին. —  
Ինչու, ինչ հուլսով, —և վորդին թնդաց, —  
Ինչու չես կովել, վոր փողը զենքեդ

Դարձնեյիր տերերի, պատերազմի դեմ,  
Նրա դեմ հանեյիր ընդվոր գնդեր.

Հալրը լուս, դանդաղ բարձրացավ տեղից  
Ու գնաց, վորտեղ մերժել եյին վորդուն.  
Յեվ կտրած ձեռքը բարձրացրած ողում  
Գոչեց նա.—տարեք, տարեք իմ տղին...  
Տարեք՝ պաշտպանի մեր յերկիրը նա,  
Վոր ինձ պես կյանքից ծարավ չմնա...

Յեվ վորդին գնաց, վառած իր հոգում  
Անհուն ցասումի կրակները թեժ.  
Ուր հայրենիքի հուրն եր բորբոքվում  
Ամեն մարտիկի արլան, սրտի մեջ.

Հոկտեմբեր, 1934 թ.  
Լենինական

\* \* \*

Այս տարին ել հոսեց ջրի պես,  
Սակայն լույսը թողեց իմ հոգում,  
Վոսկյա բերքը թողած հատակում,  
Այս տարին ել հոսեց ջրի պես,  
Նոր տարի, ո գիմում եմ քեզ,  
Դիր կյանքի նոր բառն իմ յերգում.  
Այս տարին ել հոսեց ջրի պես,  
Սակայն լույսը թողեց իմ հոգում.

## ԿԵՌԱՍԵՆԻՔ

Ծիծաղեցեք, ծիծաղեցեք իմ ծառեր,  
Կեռասենիք՝ իմ հայրենի այգու մեջ  
Ծիծաղեցեք ձեր խնդությամբ պաղարեր,  
Վոր վայելեմ ձեր պտուղները անվերջ:  
Յես սիրեցի պտուղները ձեր հասուն,  
Վորոնք իրենց մեջ կրում են լի բերկանք,  
Ու նոր նսան գուրզուրանքով սիրասուն  
Սնում ե ձեզ հայրենիքիս հողը տաք.  
Զան հայրենի այգիներ իմ պաղատու,  
Աճեցրեք, կեռասեներն իմ սիրած:  
Չէ վոր նրանք յերգերիս պես զվարթուն,  
Շունչ են առել վառ արևի ջերմի տակ:  
Ծիծաղեցեք ու փթթեցեք իմ ծառեր,  
Կեռասենիք՝ հայրենիքիս այգու մեջ.  
Ծիծաղեցեք իմաս ոռւն ու պաղարեր,  
Վոր վայելեմ ձեր պտուղներն անվերջ:

\* \* \*

Յես սիրում եմ զարնան ծաղկած կեռասենին,  
Վոր նման ե պայծառ, պայծառ մի աղջկա.  
Իսկ արեի ուժով հուրհատող սերն իմ  
Պարտիզանի նման խնամում ե նրան:  
Փուրգուրում ե նրա ծաղիկներն ու հոգում,  
Վոր քամիներն անսիրա շատ չպոկեն թվից...  
Վոր իմ կեռասենին՝ պաղատու մեր այգում  
Աճի, վարթամանա և իր բերքը թափի:  
Վոր ճյուղերից նրա և՛ թարմ, և՛ կենսատու,  
Կախվեն կարմիր, կարմիր կեռասիներն իմ սիրած.  
Ու մեր կրանքի այգին հասած և իմաստուն  
Իր մայր հողի զիրկը լցնի պտուղն իրա:  
Բայց ամենից անհուն ու կաթողին սիրով,  
Յես սիրում եմ իմ նոր հայրենիքը հզոր,  
Վոր իր զարնան պայծառ արեգնային հրով  
Գուրզուրում ե կյանքի այգիները բոլոր:  
Այգիները, վորոնք մեր արգավանդ հողի,  
Գրկում հասցնում են կեռասենի, խաղող.  
Յեկ մարդկային մտքի իմաստությամբ հղի,  
Ծաղկում են նոր յերգի ու խնդության խաղով:  
Յեկ մեծ այգեպանին, վորի ձեռքով ջրած  
Հայրենիքն իմ զարձավ զբախտային պարտեզ,  
Յերգ եմ բերում նվեր՝ սրտիս վրա զրած,  
Վորից մաքուր ու ջերմ սեր չեմ տեսել զեռ յես:

## ՄԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԿՐԵՍԼԻ ՊԱՏԻՆ

\* \* \*

Յես մոտա մի ձոխ, պտղատու այգի  
 Վորտեղ հասնում են կեռաս ու խաղող,  
 Վորտեղ կեռասի ճյուղերի տակին,  
 Ուրախ ու փոքրիկ աղջիկն եր խաղում:  
 Աղջիկն եր խաղում ձայնով զողանջուն,  
 Թարմ կենդանությամբ վողողում այգին.  
 Ծառերը կ/անքի խմաստով շնչում,  
 Յեվ որորվում եյին ծանրությամբ բերքի:  
 Յեվ համայնական իմաստության ցողն  
 Այդ ինզության հետ իջավ աչքերիս,  
 Ու յես այն մանկան հոգում խաղացող  
 Տեսա պտղատու գալիքը յերկրիս:

Այս պատից, վոր դարերի  
 Հետ և միշտ զրույց արել,  
 Նրա հին, հին քարերից՝  
 Բղիում և մի բորբ արե:  
 Իսկ ծայրից աշտարակի,  
 Կուսավառ զիշեր-ցերեկ,  
 Նման արթուն պահակի,  
 Հոկում են աստղերը մեզ:  
 Հոկում են ու շշունջով  
 Պատմում են մեր բորբ սրտին,—  
 «Պատի մեջ նա յե հնջում,  
 Ով թանգ և ժողովրդին»:  
 Ո, անդին մեր զինվորներ,  
 Այս պայծառ աստղի ներքո  
 Ծնված ձեր աշխատանքից,  
 Հաղթության մի քայլերգով  
 Անցնում և յերթը կյանքի:  
 Տեսնեյիք թե ինչ ծիծաղ  
 Արծաթի, նման հնչեղ,  
 Ինչ սեր՝ վառ ծիածան

Փարվում են պատերին ձեր:  
Իսկ այս լուռ դամբանը վեհ  
Պահում ե առաջնորդին...  
Նայում եմ նրան ու ձեզ,  
Հարազատ ինչպես վորդին.—  
Յեկ ասում,—իմ ընկերներ,  
Քնեցեք քնով հանգիստ.  
Այս պատի այն կողմը ձեր  
Ստալինն արթուն կ միշտ:

## ՆՎԵՐԸ

Բացվեց գարնան պայծառ որ, մենք շնչեցինք դաշտերի  
Մե հողի բույրն, ուր առատ մեր կյանքը սերմ և գցում  
Յեկ սուրբ հողի հայրենի մեր պահապան վաշտերից  
Մի վոսկելառ դրոշակ նվիրեցինք զյու զացուն:

Համայնական արտերի սերմնացանները հպարտ  
Հնդունեցին մեր պայծառ նվերն իրքև մի նշան,  
Վոր կայերկրի սահմանին անպարտելի պահապան.  
Յեկ թող արտերը ծեն, ու թող ցորենը խշշա:

Մեր դրոշը փողփողաց իմաստավոր, արնագույն,  
Յեկ նրա տակ ծանրացան լիք հասկերը ցորենի.  
Ու թուխ հողում լայնարձակ, համայնական արտերում,  
Որորվեցին կարմրագույն սվինները հասկերի:

Քամիները սանրեցին, փայփայեցին ու անցան  
Ճոխ արտերի իմաստուն հատիկներին քսվելով,  
Ու հասկերի ականջին փսփսացին քաղցրաձայն,  
«Ծծեք արեւ բեղուն առատ բերքի խոհերով»:

Իսկ արեւ վերեկց թափեց պայծառ մի կրակ,  
Կոր հասկերի բեղմնավոր հատիկներն ուռճանան,  
Յեկ նրանց մոտ պահապան կանգնեց հղոր մի բանակ,  
Վոր խարդախ ձեռք չդիպչի, ցորենը չփչանա:

## ՅԵՐԳ

Արել դեռ չեր ծագել,  
Յերբ յեկան ասին.—  
Յեղբայրդ տուն և յեկել  
Հրացանն ուսին:  
Թող գա նա, ջանին մեռնեմ  
Հագած զենք, զրահ:  
Հայրենի հպարտ լեռները  
Թող նայեն նրան:  
Ու սիրով ջերմ սեղմեցի  
Յես կրծքիս հպարտ.  
—Տնւն յեկար, իմ գեղեցիկ  
Յերկրի պահապան:  
Յեկավ նա, ջանին մեռնեմ  
Հագած զենք, զրահ.  
Հայրենի հպարտ լեռներ,  
Նայեցե՛ք նրան:  
—Տուն յեկա, բայց վաղը շուտ  
Կդնամ նորեն.  
Յեկա, վոր քեզ մի կուշտ  
Գրկեմ համբուրեմ:

Յեկավ նա, ջանին մեռնեմ  
Հագած զենք, զրահ.  
Հայրենի հպարտ լեռներ,  
Նախանձե՛ք նրան:  
Ու արծվի պես լեռների,  
Թուավ նա կրկին,  
Վոր պահի իմ հայրենի  
Պտղաբեր այգին:  
Կանգնած ե, մեռնեմ ջանին,  
Սահմանի վրա.  
Յեղբայրը իւ յերջանիկ,  
Հագած զենք, զրահ:

«—Գիշատիչը գեռ ուժ ուներ,  
Դեռ կանգուն եր պալատը քար,  
Թախծոտ նեվան գեռ լիզում եր  
Գարշապարը պալատական:

Յեվ քաղաքը գեռ տնքում եր—  
Կըունկի տակ գեներալի,  
Սմբակներով գեռ դոփում եր  
Զին կատաղած ժանդարմների:

Քրքջում եր դահիճը սև—  
Արյունաներկ բերդը քարե.  
Զեյին ժպտում լույսեր, ջահեր,  
Մեռնում եյին մութ, անարեվ:

Յեվ հուզիլում եր նեվան, սզում,  
Գրկում զիերն ալիքներով.  
Ու զգվում եր, սզում, սզում  
Արնոտ պատերը չանգոելով:  
Ու մի գիշեր, լուսնոտ գիշեր,  
Ճողփաց ալիքը նեվայի,  
Վաղեց, լիզեց անթիվ նավեր,  
Լիզեց ափը Կրոնշտադտի:

Վազրի նման վոռնաց քամին,  
Յերգեց բուի պես մահազուժ,  
Վզզաց,—ով կա մութ ես ժամին,  
Պատրաստ կովին արյունալույ:  
Ու յերգեցին փողերը զիլ,  
Հետո յեղավ յերթ ուզմական.

## ԼԵՆԻՆԳՐԱԴԱՆ ԳԻՇԵՐ

1.

Ծփաց սիրտն իմ նեվայի պես,  
Փրփուր թափով են ալիքի.  
Յերգի նման սիրտս հուզեց—  
Իրիկունը մեծ քաղաքի:  
  
Նեվան սահում, ժպտում և լուռ՝  
Նման խորունկ իմ աչերին  
Ու հայացքն իմ հառել եմ մուր.—  
—Մայրամուտին ստեպների,  
  
Շողաց ճերմակ գիշերը մեծ—  
Կարապի պես շողափետուր,  
Թոռվ թրամն ու առկայծեց՝  
Կայծերի շողն ալիքներում:  
  
Պատմում ե ինձ բազմախորհուրդ  
Գիշերը բիլ, կաթնալուօին—  
Հուշեր պայծառ և արեւն,  
Հուշեր արնոտ մարտի մասին:

Ու յելան զեմ մութ հողմերին—  
Արնապրոշ ու հաղթական:

Յելան ծովից ու նավերից,  
Յելան յերգով ոռումքերի,  
Յելան հրից ու արսից,  
Յելան ոռումքերը ձեռքերին:  
Յելան հանքից ու յերկաթից,  
Յելան փողից ծխանների.  
Յելան հզոր ու հաստատուն՝  
Նետեն ոռումքերն աշխարհներին:  
Հրանոթները վոռնացին,  
Վորոտացին—բնւմ, բնւմ, բն'ւմ, բն'ւմ...  
Ոխ...ոֆֆֆ... ընկան... ու յերգեցին  
Արյունաներկ բարիկադում:  
Հետո խավար, արյուն, դիեր,  
Հետո արև արնանման.  
Նորից յերգեր, կովի յերգեր,  
Դեպի դիրքերը հրաման...»:

### 3.

Լուսնի մահիկը ծիծաղեց,  
Գիշերը հուշն հուզեց նրան.  
Շողքի նման ծիծաղն հոսեց  
Ու գլուաց սրտիս վրա:  
Յել ծիծաղի նման վճիտ,  
Հոսեց գիշերն են քաղաքի.  
Ու աչքերիս դաշտի միջից  
Շողաց ցնցուղն արեգակի:

### ՍՄՈՂՆԻ

Ահա Սմողնին իմ դեմ՝ փառահեղ ու մեծ  
Թարմ հուշերի մի հրդեհ սրտում իմ վառեց.  
Նա պայծառ՝ այս քաղաքի սիրտն ե բարախող,  
Իսկ ծաղկաշատ այս այգին՝ նրան զարդարող:  
Վողջույն, ծառ ու ծաղիկներ, վողջույն քեզ, այգի.  
Վողջույն, հուշեր լուսաշող, պայծառ ու անգին:  
Ու ծաղիկները բացված, շշնջացին ինձ.—  
Շինչո՞ւ, ինչո՞ւ նա հանկարծ գնաց մեզանից.  
Մենք կմանք միշտ այսպես, նրա վշտով թաց.  
Ինչո՞ւ, ինչո՞ւ կիրովը մեզանից գնաց:  
Յես լսեցի, ու սիրտս ձնշեց մի խոր ցավ,  
Յեվ ծաղիկները սրտիս ցավից հասկացան,  
Վոր այգեպանը անգին հավիտյան գնաց,  
Բայց խնամած իր այգին անթառամ մնաց.  
Սիրտս խփում ե ուժգին, բարձրանում եմ վեր.  
Արդյոք նրա սենյակին յերբ կհասնեմ, յերբ:  
Ահա բացին դռները, ել մի խփիր սիրտ,  
Կտեսնեմ իր ձեռները դրած սեղանին:  
Ու սենյակն եմ մտնում յես սրտի տրոփով.—  
Ո՞ւր ե մարդը ժպտասեր, ո՞ւր ես դու, կիրով:

Սակայն Կիրովը չկա, աթոռը փոքրիկ  
 Նման մի վորբ աղջկա, նայեց իմ գեմքին:  
 Սիրտս ընկավ մի կրակ, փոթորկեց կրկին,  
 Ու փոթորիկը արագ լափեց իմ հոգին:  
 Միայն Իլյիչը ժպտով, նայում եր վերից:  
 Նայում եր իմ արցունքով լցված աչքերին:  
 Ու կարծես ցույց եր տալիս՝ նայիր, այ, նայիր:  
 Ներս մանողը չի լալիս, սիրադ պինդ պահիր:  
 Յես նայում եմ հայացքի ուղղությամբ նրա՝  
 Յույց ե տալիս ապակին՝ զլխարկի վրա...  
 Ո՛, զլխարկը արյունոտ, զնդակով ծակած,  
 Դրված ե լուռ նրա մոտ, վորպես մի վկա:  
 Վարպես վկա, վոր մի որ այստեղ, այս տան մեջ  
 Մի սոսկալի, ահավոր վոճիր կատարվեց.  
 Վոր վոճրագործը վախկոտ, տմարդի ու նենդ,  
 Սողունի պես սողալով՝ կրակ բաց արեց:  
 Կրակեց... Ու խլեց մեզանից նրան,  
 Կոճիրի հետքը մնաց զլխարկի վրա:  
 Այդ զլխարկի արյունոտ տեղը զնդակի  
 Անհուն վրեժի թույնով վառեց իմ հոգին:  
 Հաղիվ ցասումը զսպած զուրս յելա տանից.—  
 Իմ գեմ քաղաքը փոված վողջունում եր ինձ:  
 Ու Ժպտում եր ամեն ինչ արեվի ներքո.  
 Նայում եյին ամենքն ինձ՝ Կիրովի գեմքով:

## ԿԻԿԻՑՈՐԸ

Նրան—այդ հույն ենտուզիաստին մի գիշեր  
 Ճամբեցին շախտ, լեռան կուրծքը քանդելու,  
 Վորպես փորձված, և' անձնվեր, և' ուժեղ  
 Մի հետախույզ՝ պղնձերակ գանելու:

Առավ քլունդ, կարբիդի լամպ, դինամիտ,  
 Մտավ լորքը՝ քարածուխի նման մութ,  
 Նրա զլխին մաղվում եր ջուր ու կարբիդ  
 Լամպը նրա ճեղքում եր ողը հեղձուկ:

Անցավ այն մութ, յերկար ճամբան լեռան տակ,  
 Կանգնեց հպարտ կույր ու կարծը ժայռի գեմ.  
 Լամպը կախեց, քլունդն առավ ու անհագ  
 Պղնձածույլ ժայռերի հյուսքը քանդեց:

Նա քանդում եր՝ սրտում թասիբը շախտի,  
 Մի պայծառ հույս, վառող ճակատ ու մկան.  
 Զե վոր նրան ասել եր հին մի տեխնիկ,  
 Թե եկ շախտում պղնձաքար ել չկա:  
 —Տեսնենք, պարոն ֆրանսիական կատվի դունչ,  
 Տեսնենք ինչ ե խոսում պղինձը շախտի,—

Մըմնջում եր դարձած կրակ, դարձած մուրճ.  
Յեվ իջնում եր մուրճը կամքի ու բախտի,

Փորեց...ծակեց քարոտ կողերը շախտի,  
Դրեց այստեղ մի զինամիտ ու պատրույգ,  
Առավ լամպը վասեց պատրույգն, վոր պայթի,  
Ինքը փախավ սպասելով հեռվում լուս:

Դը ո ոռ... դդիրով հազար կոկորդը ժայռի,  
Ցնցվեց, գողաց, քանդեց սիրտը մի բլուր,  
Ու յեռանդով զալած տագնապը սրտի—  
Դորովանքով տեսավ պղինձը հուր-հուր:

Պայծառ զույնով փայլեց կոշտը պղնձի,  
Նա անսահման մի խնդությամբ ծիծաղեց.—  
—Յես հաղթեցի, յես հաղթեցի, հաղթեցի.—  
Յեվ հաղթողի ժպտով ժայռը համբուրեց:

Հետո հուժկու մի հարվածով քլունգի  
Պոկեց քարի քթից «ջուհարը» կապույտ.  
Գրկեց պայծառ այս զանդլածը պղնձի  
Ու գգվանքով վագեց շախտից գեպի գուրս:  
Դուրսը վառվող առավոտ եր, չզիտեր,  
Թե լեռն արդեն ծնել ե նոր մի արև.  
Ու արել թափեց պղինձ, թափեց սեր—  
Իր խուրձերով պայծառ, դեղին, հրեղեն:

## ԻՍՊԱՆԱԿԱՆ ԾԱՌԵՐ \*)

### 1.

Այս ծառերի հետ զրույց արեցի,  
Համբուլը դրեցի նըանց թփերին.  
Այգեպանի պես ջերմ գուրգուրեցի  
Յեվ ընծայեցի մեր հողը բերքի,  
Յեկել են նրանք այն հեռու յերկրից,  
Ուր ձիլ ու ծառեր ձգտում են բերքի,  
Ուր գեան ե հոսում արնով վարարուն.  
Սակայն այգեկութ կգա այդ այգուն,  
Պայծառ ժպտով ե բարձրանում արփին.  
Փրկություն չկա վայրագ թշնամուն՝  
Յերգում ե նա իր յերզը կարապի:

### 2.

Մեր հողը մոր պես ե,  
Մեր հողն հարազատ.

\*) 1937 թ. մարտին իսպանական մի նավով Ողեսա բերցելին մի քանի հազար իսպանական մատաղ պտղատու ծառեր (դեղձի, ծիրանի, կեռասի և այլն) Խորհրդային Միության հարավային շրջաններում աճեցնելու համար:

Արեն ել, վորպես յես,  
Ժպտում ե աղատ:  
Կղբկի մեր հողը  
Սրանց սիրալիր,  
Կժպտա գուրզուրսդ,  
Արեն հայրենի:  
Կոնի սրանց մեր  
Զուրն համայնական,  
Կկախվեն թվերը  
Քնքուշ մայրաբար:

## 3.

Ծառերն այս մատադ են,  
Դեռ բերք չեն տեսել.  
Կծաղկի մեր բաղը,  
Նրանց հետ յես ել...  
Կտնկեմ սրանց յես  
Հողում մեր պարաբա,  
Վոր տան կարմրակեղ  
Բերքն իրենց առատ:  
Կծաղկեն զարնան հետ,  
Ծառերն այս մրգի,  
Յերգն իսպաներեն  
Կլցվի այգին,  
Կդան բլբուլերը  
Հայրենի բաղից,  
Կնստեն ճյուղքերին  
Դեղձի, խաղողի.  
Կնստեն, իսկ ծառը  
Հողմից կորորվի,  
Կպատմի պայծառ այն  
Բորբ կոիկներից:

Կպատմի թե վոնց  
Այն աղջիկը թուխ,  
Սև աչքերում բոց  
Ու վոխը սրտում,  
Գրկեց գնդացիրը,  
Զերմ-ջերմ համբուրեց,  
Ու սիրած տղի հետ  
Ճանապարհ դրեց...  
— Գնա, — հաստատուն  
Ասաց նա տղին, —  
Հետ չգառնաս տուն  
Կովից կատաղի,  
Մինչև չհաղթես  
Թշնամուն զաղիր,  
Ինչքան ել տեսնես —  
Նա կդաղաղի,  
Իսկ յես որն ի բուն  
Կշինեմ փամփուշտ,  
Կճամբեմ, վոր դու  
Խփես թշնամուն.  
Սպանիր նրանց դու  
Յեվ մի ափսոսա, —  
Անմար յեռանդով  
Այն աղջիկն ասաց:  
Ասաց այն աղջիկը,  
Ու տղան գնաց,  
Գնաց այն մարտիկը  
Գնդացիրն առած:

Գիտեմ այն մարտերը  
 Հողը կփռիսեն,  
 Յեվ նրանց արտերը  
 Հասկեր կկախեն;  
 Արև կշնչեն իմ  
 Ծառերն այս մատադ,  
 Բերքի հետ հնչելով  
 Մրգի յերգ ու տաղ,  
 Այգեկութ կլինի  
 Կանցնեմ յես բաղով,  
 Կլցնեմ կողովն իմ  
 Դեղճ ու խաղողով.  
 Կլցնեմ արկղներ,  
 Կլցնեմ նավեր,  
 Կծամբեմ լրկին ձեզ,  
 Անգին ընկերներ...  
 Վոր դուք ել վայելեք  
 Բերքը ձեր ծառի,  
 Մինչև ձեր յերկինքը  
 Պարզի, պայծառի:

\*

Կծաղկեն գարնան հետ  
 Ծառերն այս մրգի,  
 Յերգն իսպաներեն  
 Կլցվի այգին,  
 Կղան բլբուները

Հայրենի բաղից,  
 Կնստեն ճյուղերին  
 Դեղճի, խաղողի...  
 Կնստեն, իսկ ծառը  
 Հողմից կորորվի,  
 Կպատմի պայծառ այն  
 Բորբ կոիվներից:

## ԿԱՐՈՍԸ

Ա. Մ. ԿԻՐՈՎԻ ԱՆՄՈՌԱՅ ՀԻՇԱՏՄԿԻՆ

Յես շրջեցի իմ չքնաղ յերկրում հայրենի,  
Հասա մինչև արեելք, մինչև արեմուտք:  
Յես դուրս յեկա հարավից, հասա մինչև հյուսիս,  
Տայգաներում քնեցի զիշերները մութ:

Անցա մեր սուրբ հայրենի սահմանի մոտով,  
Ուր արծիմները բազում հսկում եյին նրան.  
Յեվ մեր հպարտ լեռների ծաղկաշատ հոտով  
Արբած՝ արթուն շրջում եյին սահմանի վրա:

Մտա Բագու, փնտուցի, մտա Աստրախան,  
Դազստանի լեռներում շրջեցի անքուն,  
Ու կանչեցի կարոտով, ձայն տվի այնքան...  
Ինձ չտվին կիրովին լեռներն ու Բագուն:

Մտա քաղաքը նրա. հսկայամարմին,  
Նեվան քշում եր կրկին ալիքները յուր.  
Ինձ վողունեց Մմոնու պահակը կարմիր,  
(Ո, ինչքան եյի յես նրան տեսել յերազում):

Տեսնել նրան, վողջունել, ասել բարեկամ,  
Ո՞ւր ե Սերգեյը անզին, Միրոնիչը մեր.  
Յես կարոտել եմ նրան, ուզում եմ նա զա,  
Դա ժպտա ինձ ու ասի՝ ինչ լավ ե ապրել...:

Սակայն, ավաղ, չտեսանք՝ վոչ պահակ, վոչ յես  
Մեր թանկազին կիրովի ժպիտը մեղմիկ,  
Զոհվել եր նա՝ արժանի զավակը վորպես,  
Վոր մահով իր՝ նոր ուժ տվեց ծնողին:  
Յեվ յես բոլոր դաշտերում, սարերում բարձրիկ,  
Ժողովրդի բերանից լսեցի մի յերգ.—  
«Մեր թանկազին Միրոնիչ, քո արնով կարմիր  
Բորբոքեցիր նոր կոփլ թունոտ իժի դեմ...»

30 նոյեմբերի 1938 թ.

## ՅԵՍ ԶԵՄ ԱՓՍՈՍԱ

Ահա իմ յերկրի վաղվա որերից  
Պայծառ ու պայծառ արև և կաթում,  
Յեզ իմ այգեստան յերկիրը հրից՝  
Խաղողի անուշ վոխկույզ և հյութում:  
  
Ո՛, յես ծծում եմ հյութերը նրա,  
Յեթե մեռնեմ ել յես չեմ ափսոսա,  
  
Յես չեմ ափսոսա, թեկուզ մեռնեմ ել,  
Քանզի իմ յերկրի այգիների մեջ  
Թափկեց բերքատու խնդության անձրև  
Ու այգեգործի ուսերը թրջեց,  
  
Յես ազահարար շնչեցի ողը  
Թարմ, այնքան առատ անձրեից հետո,  
  
Յես իմ յերազած որերը տեսա,  
Հիմա մեռնեմ ել, յես չեմ ափսոսա,  
  
Յես չեմ ափսոսա... Սակայն ով կուզե  
Այս չնաշխարհիկ աշխարհը թողնել.  
Այս կոփմուրի կովարանը բորբ,  
Վոր հրկիզում և մեր գունդը հողեւ

Բայց ով չզիտե դարձումն տշխարհի,  
Վոր ամեն դարձին կոփվ և ծնում.  
Հենց վաղն ե, գուցե, վառվում մի կոփվ  
Ու աշխարհով մեկ ոռոմբեր ցրում:  
  
Յես պիտի գնամ, պիտի բարձրանամ,  
Կապույտ յերկնարից ոռոմբեր վար նետեմ.  
Գուցե վողողվեմ արյան անձրեսում,  
Սակայն յես զիտեմ, աշխարհը զիտե,  
  
Վոր յեթե կովում այդ յերկտասասան,  
Իմ արնաթաթավ դիակը տեսաք  
Ու կոխտեկով անցաք հաղթաքայլ,  
Յես չեմ ափսոսա, յես չեմ ափսոսա...  
  
Յես կաղաղակեմ իմ թոքերով լի  
Ամբողջ աշխարհի իմ յեղքայրներին, —  
—Աշխարհակործան ոռոմբերը լցրեք  
Ու հին աշխարհը ոմբակոծե՛ք:  
  
Յեզ կոփներում աշխարհառասան,  
Յեթե ընկնենք ել, գուք միք ափսոսա—  
Գուք մի՛ք ափսոսա...:

**ՅԵՐԳ ԼԵՆԻՆԻ ՄԱՍԻՆ**  
(ՀԱՄԲՈՒԼԻՑ)

Չայնն ենք լսում քո յեռացող՝ վորպես հեղեղը  
լեռնային,  
Վորպես ուժը այդ հեղեղի՝ փշող ամուր քարաժայռեր.  
Նա հոսում է դեպ արեներ, դեպ արևմուտք, հարավ,  
Հյուսիս,  
Ամենազոր, հզոր ու խոր՝ քանդող բոլոր  
ամբարտակներ—  
Ու լսում ենք մեն ձայնը քո, դու մարդկության  
բատիր\*)՝ կենին:  
Մենք տեսնում են աչքերը քո, վոնց ամառվա բորբ  
արեի  
Ճառագայթներ՝ բորբոքում են մեր սրտերը կավի  
Ժամին.  
Նրանց փայլից հարուստները կորցնում են քուն ու  
դադար,

Նրանց ահից գունատվում են դածիձները՝ խեղդող ու  
չար,  
Իսկ մենք հիմա հարձակվում ենք, ինչպես դու ես  
կտակել մեզ, կենին.  
Ովկիանի պես հզոր ու լայն, նրա նման միշտ  
փոթորկող,  
Անսահաման ե ու մեծ ե քո հանճարն՝ յերեկք ել  
չմարող.  
Նա մարտի յե հանում մարդկանց շղթայակապ  
յերկրների.  
Ահա ճորտերն են բարձրանում, իսկ բռնակալը  
սարսափով  
Ու դարձացած կարդում ե այն դրոշակի վրա «Լենին»:  
Ամենուր ե քո բոցը վառ, դու անմար ես ամեն  
սրտում՝  
Իսպանական մարտիկների խիզախության մեջ ես  
վառվում,  
Ու չինական զինվորների, վորոնք դեպի մահ են գնում:  
Մե ֆաշիզմի դեմ գրոհող հերոսության մեջ քաջերի—  
Ու բանտերում դեռ տառապող մարտիկների  
համառության  
Մեջ՝ ամենուր քո բոցը կա, կովին վոգի տվող կենին:  
Քո պատկերը միշտ անմահ ե: Միլիոնները շարքերի մեջ  
Նմանվում են նրան, քայլում, ջանքով աղնիվ մղվում  
առաջ.  
Հերոսներ ես կերտում դու միշտ Փաբրիկներում,  
դաշտերի մեջ,  
Նրանց կրծքին շքանշան, և նշանի վրա պայծառ՝  
Քո պատկերն ե, իմ սիրելի, մոռացումից հեռու կենին:

\*) Բատիր—դյուցազն:

Քո պատկերը միշտ անմահ եւ: Դու կաս լարված մեր  
 պայքարում,  
 Ելեկտրական մեր լույսերում, մաքուր փայլի մեջ  
 պողպատի,  
 Ու յերգերում ժողովրդի ու բախտի մեջ մեր յերջանիկ,  
 Յել նրա մեջ, վոր միակն ե իր հանճարով հավասար  
 քեզ,  
 Վորին մենք միշտ կոչում ենք հայր և առաջնորդ  
 Մեծ ՍՏԱԼԻՆ:

## ՑԵՐԳ ՍՏԱԼԻՆՅԱՆ ԻՄԱՍՏՈՒՆ ՈՐԵՆՔԻ ՄԱՍԻՆ

(ԶԱՄԲՈՒԽԼԻՑ)

Սքանչելի կյանքի մասին յերազեցին շատ պոետներ,  
 Յերջանկության մասին միայն յերազելով նրանք  
 մեռան.  
 Բայց միայն մենք գրված տեսանք Որենքը մեծ,  
 Վոր յերջանիկ իրողությամբ աշխարհը մեր լուսավորեց:  
 Յերկու տարի նոր Որենքի խոսքն աշխարհում,  
 Վորպես արև հուրիսուրում ե, բացավառվում:  
 Զահելությունը լիաբյուն թե չլիներ,  
 Ել չեր լսի սիրաը սիրո յերգը թովիչ.  
 Ճշմարտության ձայնը լսեք, նրան սիրեք,  
 Լսեք սրտին իմ պատահու, լսեք գուք ինձ:  
 Որենքի խոսքը արևից փայլուն դարձավ,  
 Պողպատից պինդ՝ իրավունքը ժողովրդի.  
 Խոսք—հսկաներն աստղերի պես դարձան պայծառ,  
 Խոսք—հսկաներն յերջանկություն նվեր բերին:  
 Այդ Որենքը ժողովուրդներին վողջ աշխարհի  
 իմաստություն ու խնդություն պարզեց վառ,

Յեվ իրավունք՝ վոր սովորեն, լինեն հանգիստ,  
Յեվ իրավունք՝ վոր տքնեն մայր-յերկը համար:

Նա իրավունք բերեց հանգիստ մի ծերության,  
Իրավունք, վոր ամենքն յերկիր կառավարեն.  
Նա ստեղծվեց, վոր աշխարհը հավետ խնդա.  
Ստեղծողը՝ մեր մեծ բատիր \*) Ստալինն է:

Յերջանկության լույսն է շողում յերկրի վրա,  
Աստղեր-սուտակ վառվում են աշխարհիներից,  
Վոսկե հացով լցվել են մեր դաշտերն առատ,—  
Կամ արդյոք հող, վոր բախտավոր լինի մերից:

Մեծ Որենքով վողջ աշխարհը վերածնվեց,  
Կեցցե Որենքն Ստալինյան՝ իմաստուն, մեծ:

## ՎԵՐՋԵՐԴ

ՆԱԽԵՐԳԱՆՔԻ ՓՈԽԱՐԵՆ

Յերջանկության հույզով ու սիրով դողահար  
Դիմում եմ Քեզ ահա, յերկիր.  
Իմ որորոց, իմ մայր, և խոհերի իմ արտ,  
Իմ քնար՝ ցնծության յերդի:  
Լսիր, վոր Քեզ պատմեմ յերկու բառով իմ այս  
Ցնծությունը հոգուս, ասել վողջ աշխարհին,  
Վոր կպոկվեյի ծառից, վորպես մի խակ կեռաս,  
Թե արեք Քո ջերմ չդիպչեր իմ ծառին:  
Յեվ յերբ յես ծնվեցի, մեր տան ու ոճորքից  
Յերկվորյակի նման՝ վորպես ինձ քույր,  
Կախվեց ինձ հետ մեկ տեղ դառնությունը կյանքի  
Աղքատ, ցնցոտիապատ ու կույր:  
Մայրս վշտոտ հոգով, սրտով գորովադին  
Դողդողաց իր վորդու խանձարուրի վրա.  
Բայց մտածեց արդյոք, վոր արեն այս կյանքի  
Յերջանկության գանձեր կպարզեվե նրան:  
Ու յես իմ մանկական պղտոր աչիկներով,  
Վոր արցունքի միջից միայն աշխարհ տեսան  
Ընդունմակ եյի տեսնել գուրգուրանքը իմ մոր,

\*) Բատիր—դյուցադնեց

Յ Ա Ն Կ

Կամ սրտով նրա հետ խոսալ:  
 Այդ զգացու մն անգին այսոր, միայն այսոր,  
 Ծաղկեց, աճեց, հասավ հոգուս ծառի վրա.  
 Յեվ հայրենի արևն իր խուրձերով կիզող,  
 Տաքացրեց, վոր ջերմ վորդին սիրե նրան:  
 Շնորհակալ եմ մայր, վոր ինձ աշխարհ բերիր,  
 Յեվ ինձ յերջանկացրեց հայրենիքիս սերը.  
 Հոգիս սիրո պարտեղ դարձավ հողով բերրի.  
 Ու թափվում են ծառից հասած կեռասները:



	Եջ
1. Հայրենիքիս	5
2. Հենակետը	7
3. Նախատինը	10
4. Սրինգը	11
5. Ցեթե ասեն	14
6. Ցերջանկության որենքը	16
7. Քայլերգ սահմանապահների	18
8. Ցերգ լճի վրա	19
9. Պատգամը	21
10. Հանդիպում	23
11. Սուրիկի նամակը ողաչու Զկալովին	26
12. Հարցասեր տղան	28
13. Առավուա	31
14. Ցերգ մի գինակոչիկի մասին	32
15. Այս տարին ել	37
16. Կեռասենիք	38
17. Մակագրություն Կրեմլի պատին	41
18. Նվերը	43
19. Ցերգ	44
20. Լենինգրադյան դիշեր	46
21. Սմոլի	49
22. Նիկիֆորը	51
23. Խսպանական ծառեր	53
24. Կարուաը	55
25. Ցեմ ափսոսա	60
26. Ցերգ Լենինի մասին	62
27. Ցերգ Ստալինյան իմաստուն Որենքի մասին	65
28. Վերջերգ	67

Գատ, լսմբագիր՝ Սիր անո  
Տեխ, լսմբագիր՝ Սա. Ալթունյան  
Մրբագրիչ՝ Գար. Հակոբյան  
Կոնտրոլ սըբագրիչ՝ Հ. Մանուկյան

Գլավիտի լիազոր Վ.-2118, Հրատ. 4535

Պատկեր 210. Տիրած 3000

Թուղթ 72×105, տպագրական 2½ մամ.

Մեկ մամուլում 51200 նշ.

Հանձնված և արտադրության 28 փետրվարի, 1938 թ.

Մարդագան և տպագրության համար 10 ապրիլի 1939 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0345446

36407

9700 1 n. 70 4.